

ՀՈԳԵՃՆՈՐՀ Տ. ԱԲԵՏԻՍ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԻՓՐԱՃԵԱՆ



Աւագանի անունով Մատթեոս: Ծնած է 10 Դեկտեմբեր 1966-ին Լիբանան, Պէյրուս: Սկզբնական կրթութիւնը ստացած է Անթիլիասի Մարտիկեան Ազգային Վարժարանը: Ապա, 1979-ին կ'աշակերտէ Մեծի Տանն Կիլիկիոյ՝ դպրեվանքին մինչեւ 1982: 1981-ի Մայիս ամսուն դպիր կը ձեռնադրուի ձեռամբ՝ Գերաշնորհ Տ. Տաթև Արքեպիսկոպոս Սարգիսեանի: 1982-1985 կ'աշխատի իբրև ելեքտրագործ: 1985-ին Երուսաղէմ գալով՝ իր ուսումը կը շարունակէ Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի յարկէն ներս: 1987 Յունուար 6-ին, Սուրբ Ստեփանոսի տօնին, սարկաւազ կը ձեռնադրուի ձեռամբ օրուան Լուսարարապետ՝ Գարեգին Արքեպիսկոպոս Գազանճեանի: Սարկաւազական չորս տարիներու ուսման ընթացքին զուգընթաց, վարած է մատակարարութեան պաշտօնը իբրև տեսուչ մատակարար: 1991-ին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ, ձեռամբ օրուան Պատրիարք՝ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանի: 1994-2006 տարիներուն եղած է Մարտիկեան Թանգարանի Տեսուչ: 1996-1999 տարիներուն կ'ուսանի Երբայական Համալսարանին մէջ: 1998-1999-ին կը վարէր Աւագ Թարգմանի պաշտօնը: 1999-2014 եղած է Կալուածոց Տեսուչի օգնական: 1999-2017 տարիներուն կը վարէր Մայր Դիւանի հին վկայագրերու գրասենեակի տեսուչի պաշտօնը: 2002-ին՝ ուսուցիչ Ժառանգաւորաց Վարժարանի: 2002-2007 տարիներուն ուսանած է իրաւաբանութիւն: 2004-ին ստացած է վարդապետական չորս աստիճաններ, ձեռամբ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանի: 2005-2010 տարիներուն տեսուչն էր Հայֆայի, Եաֆայի եւ Ռամլէի եկեղեցիներու: 2005-2014 տեսուչ՝ Եաֆայի եւ Ռամլէի եկեղեցիներու: 2016-ի Յուլիս 6-ին կը նշանակուի Յորդանանահայոց Առաջնորդ եւ Պատրիարքական Փոխանորդ: 2017-ի Օգոստոս 10-ին ստացաւ Ծայրագոյն Վարդապետութեան աստիճան, ձեռամբ՝ Տ. Նուրիան Արքեպիսկոպոս Մանուկեանի: